



«ԱՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

N 1943-Ա

«24» նոյեմբերի 2025 թ.  
ք. Երևան

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ  
23-Ի N 1785-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ նախատեսված հանձնաժողովի որոշ անդամներ 2025 թվականի նոյեմբերի 25-ին բացակայելու են Հայաստանի Հանրապետությունից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 88-րդ հոդվածով և 120-րդ հոդվածի 3-րդ մասով, «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքի 18.1-ին հոդվածով, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 2377-Ա/2 հրամանով և ՀՀ մշակույթի նախարարի 2020 թվականի մայիսի 22-ի թիվ 652-Ա հրամանով հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, այսուհետ՝ Թատրոն, կանոնադրության 25-րդ կետի 12-րդ ենթակետի, Թատրոնի տնօրենի 2025 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 1785-Լ հրամանի 7-րդ կետի պահանջներով՝

հրամայում եմ.

1. Թատրոնի տնօրենի 2025 թվականի հոկտեմբերի 23-ի «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության նվազախմբի տրոմբոնահարների զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման (մասնագիտական որակական քննությունների անցկացման) մասին» թիվ 1785-Լ հրամանի, այսուհետ՝ Հրաման, 1-ին և 6-րդ կետերում «2025 թվականի նոյեմբերի 25-ին» բառերը փոխարինել «2025 թվականի դեկտեմբերի 11-ին» բառերով:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել Թատրոնի տնօրենի առաջին տեղակալ Կարինե Կիրակոսյանի վրա:

3. Թատրոնի նվազախմբի վարիչին՝ սույն հրամանի մասին պատշաճ ծանուցել Թատրոնի նվազախմբի այն երաժիշտներին, ովքեր սույն հրամանի համաձայն պետք է անցնեն զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգում, ինչպես նաև նրանց նախապատրաստել զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգմանը:

4. Թատրոնի հասարակայնության, հանդիսատեսի հետ կապերի և մարքեթինգի բաժնին՝ սույն հրամանը հրապարակել Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում առանձին բաժնում՝ նշելով ակտի հրապարակման օրը:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակմանը հաջորդող օրը:

Թատրոնի տնօրեն՝  
ք. Երևան  
«24» նոյեմբերի 2025 թ.

Կ. Դուրգարյան